**03.12.2020 թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-67»**

**պայմանագրում փոփոխություն/լրացում կատարելու վերաբերյալ**

**համաձայնագիր № 1**

ք. Երևան 30 դեկտեմբերի 2020 թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Յունիքոմփ» ФԲԸ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Բալդրյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-67» պայմանագրի 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. *Համաձայնագրի առարկան*

1. Հիմք ընդունելով Վաճառողի կողմից 25.12.2020 թ-ին ստացված գրությունը և 2017 թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ կողմերը որոշեցին 2020 թ. դեկտեմբերի 03-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-67» պայմանագրի մասով ապրանքների ժամկետը երկարաձգել 20 աշխատանքային օրով (մինչև 04.02.2021 թ.):
2. Սույն համաձայնագրի 1-ն կետում նշված ապրանքների մասով վճարման ժամանակացույցը կհաստատվի լրացուցիչ համաձայնագրի միջոցով 2021 թ-ին:
3. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-67» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
4. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
5. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից. սույն համաձայնագիր № 1-ն է հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ | «Յունիքոմփ» ՓԲԸ |
| Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12 | Հասցե՝ ք. Երևան. Չարենցի 37 |
| Կենտրոնական գանձապետարան՝ | Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ |
| Հ/Հ 900018004649 | Հ/Հ 217001021021001 |
| ՀՎՀՀ 02625503 | ՀՎՀՀ 01815551 |
| Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Վանյան | Տնօրեն՝ Ա. Բալդրյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |